ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության իրավունքը վաճառելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին որոշման նախագծի

Նաիրի համայնքի ղեկավարին է դիմել Մաքսիմ Վահագնի Ղարիբյանը Նաիրի համայնքի Եղվարդ քաղաքում գտնվող, վարձակալության իրավունքով տրամադրված 07-004-0226-0050 և 07-004-0226-0039 ծածկագրերի 0.00201 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողամասի նկատմամբ վարձակալության իրավունքը վաճառելու խնդրանքով: Ներկայացված որոշման նախագծով առաջարկվում է համաձայնություն տալ քաղաքացու հետ կնքված վարձակալության իրավունքը վաճառելու վերաբերյալ:

ՏԵՂԵԿԱՆՔ

Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության իրավունքը վաճառելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Նաիրի համայնքի բյուջեում ծախսերի էական ավելացման կամ նվազեցման մասին

Համայնքային սեփականություն հանդիսացող գույքի վարձակալության իրավունքը վաճառելու վերաբերյալ համաձայնություն տալու մասին որոշման ընդունումը 2025 թվականի բյուջեում ծախսերի և եկամուտների էական ավելացում կամ նվազեցում չի ենթադրում:

Աշխատակազմի քաղաքաշինության բաժնի պետի
պարտականությունները կատարող՝ Ա. Մովսեսյան